Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՆՈՐԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ,
ՄԱՆՈՒՇԱԿ ՏԻՏԱՆՅԱՆ
Ստեփանակերտի քաղաքապետարան

ՇՈՒՇԻԻ ԵՐԿԱԹԵՂԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

2005 թ. հունիս-հուլիս ամիսներին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղումներ կատարեց Շուշի քաղաքում և նրա շրջակայքում[1]: Արցախում հնագիտական ուսումնասիրությունների իրականացումը հնարավոր դարձավ միայն տարածքի ազատագրումից հետո: Ի սկզբանե նախատեսվել էր հետազոտությունները կատարել երկու հիմնական ուղղություններով. նախ՝ վերհանել լեռնաշխարհի հիշյալ հատվածում հայ ժողովրդի կազմավորման գործընթացները, ապա միջնադարյան հուշարձանների ուսումնասիրությամբ ցույց տալ Շուշիի սարահարթի՝ հայերով բնակեցված լինելն ու հայկական մշակույթի առկայությունը մինչ Փանահ խանի հայտնվելը տարածաշրջանում:

Արշավախումբը 2005 թ. Շուշիին հյուսիսից և հյուսիս-արևելքից հարող դամբարանադաշտերից յուրաքանչյուրում պեղել է մեկական դամբարան: Հյուսիսային (կամ օդերևութաբանական կայանի) դամբարանադաշտում ավերվելուց փրկելու նպատակով ընտրվել էր 61 համարը կրող կիսավեր դամբարանը, որի նյութերը Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի աշխատակիցների կողմից տեղափոխվել են թանգարան: Դամբարանը գտնվում է թեքության վրա (№ 39°46'20,5", E 046°45'42,2", բարձրությունը՝ 1079 մ) և քարահողային լիցքը հավասար է կրոմլեխի քարերի մակարդակին: Այն շրջապատ-

[1] Պեղումներն իրականացվել են «Ժան Պողոսյան և որդիներ» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Արշավախումբը ղեկավարել է պ.գ.դ. Հ. Պետրոսյանը, մասնակցել են Ն. Ենգիբարյանը, Վ. Սաֆարյանը, ճարտարապետ Մ. Տիտանյանը և Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Ա. Հարությունյանը:

ված էր իրար կողքի, տարբեր մեծության քարերով շարված կրոմլեխի երկու շարքով: Առաջին շարքի շարի մեջ (տր. 9,8) կային ուղղահայաց դրված մի քանի սալաքարեր: Հյուսիսային կողմի քարերը բացակայում էին: Կրոմլեխի երկրորդ շարքի քարերը դասավորված էին պարուրաձև (տր. 7,7 մ):

Դամբանախուցը զուրկ էր ծածկասալերից: Ավերողները խցից հանված հողը լցրել էին քարահողային լիցքի արևելյան և հարավային մասում, որտեղից գտնվեցին բազմաթիվ խեցեբեկորներ և օբսիդիանից շեղբ (կտրված 2 կտորից): Դամբարանի հյուսիսային մասում (կրոմլեխի երկրորդ շարի ներսում) հայտնաբերվեցին երկաթե գեղարդ (աղ. 1, նկ. 5) և արծաթե դրվագված զարդաթիթեղ (աղ. 1, նկ. 3): Արևմտյան հատվածի կրոմլեխի քարերի մոտ գտնվեց բրոնզե զանգ (աղ. 1, նկ. 7) և երկու ապարանջան: Դամբարանից հեռացնելով մեջը թափված քարերը և քանդած հողը, նրա հյուսիսարևմտյան անկյունում փաստագրվեց անխաթար մնացած մի փոքր հատված, որում խեցեղենի բեկորները և ոսկրային մնացորդները (մարդկային և կենդանական) միախառնված էին: Խցի մաքրման ընթացքում՝ տարբեր մակարդակներից հայտնաբերվեցին մի քանի հարյուր խեցեբեկորներ, օբսիդիանից նետասլաք (աղ. 1, նկ. 6), ուլունքներ (աղ. 1, նկ. 8, 9, 10): Դամբարանախուցը (3,15 × 1,8 × 0,95 մ) ուղղանկյուն հատակագծով քարարկղ է, որի պատերը շարված են միջին մեծության քարերով և մի քանի սալաքարերով: Արևելյան պատի հարավային, հյուսիսային արևելյան հատվածները բացակայում էին: Խցի հատակը ժայռն էր, որի բնական ճեղքերի մեջ լցված հողում նույնպես խեցեբեկորներ կային: Թիվ 61 դամբարանից հայտնաբերված զենքերից երկաթե խողովակակոթառ, միջնաջիղ ունեցող սայրով նիզակը տարածված զինատեսակ է մ.թ.ա. VIII–VI դդ. հուշարձաններում: Խողովակաձև կոթառի ստորին մասի միջանցիկ անցքերը ծառայել են փայտե կոթը գամելու համար: Նման նիզակներ հայտնի են մ.թ.ա. VII-VI դդ. թվագրվող Գոլո-

վինոյի[2], Դիլիջան քաղաքի Թախտա և ՀԱՄԿԽ-ի առողջարանի տարածքի դամբարաններից[3], Ղաչաղանից[4], Ծաղկաշատից[5], Հարժիսից[6]: Հայտնաբերված հաջորդ զինատեսակը վանակատից՝ հիմքում ուղղանկյուն փորվածքով, խնամքով ռետուշված եզրերով նետասլաքն է: Ձենքի այս տեսակը հայտնի է բրոնզի դարի վաղագույն փուլից և սակավաթիվ օրինակներով շարունակում է գոյատևել մինչև մ.թ.ա. I հազ. I կեսը: Համաժամանակյա հուշարձաններից հայտնի է Աստղաձորում[7], Բասարգեչարում[8], Կարճաղբյուրում[9] և այլուր: Դամբարանից հայտնաբերված միակ գործիքը օբսիդիանից շեղբն է, որը կարող էր օգտագործվել կտրելու և քերելու նպատակով: Մետաղական գտածոներից հետաքրքիր է նաև բրոնզաձույլ զանգը, որի ստորին եզրով անցնում է մանր կետաշար: Շրջանաձև ունկից ներքև արված անցքերում ամրացվել է ձող, որից կախվել է լեզվակը: Զանգերը, որպես մարտակառքի և ձիասարքի տարր, Արաքսից հյուսիս հանդես են գալիս մ.թ.ա. VIII դարից: Հայտնի են ուրարտական զանգերի երկու տարբերակ. զանգվածեղ՝ լայնակի անցնող ուռուցիկ գոտիներով և միջանցիկ քառակող բացվածքներով, և երկրորդ՝ բրոնզե թիթեղից, երբեմն երկայնական ծեղքով: Երկուսն էլ օժտված են կախելու շրջանաձև ունկով: Զանգերը հիմնականում հայտնաբերվել են

[2] *А. Мартиросян.* Раскопки в Головино. Ер., 1954, табл. I, рис. 10.

[3] *Ս. Եսայան, Հ. Հովհաննիսյան,* Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի, Ե., 1969 (XXX/6, XXXIX/6):

[4] *С. Есаян.* Оружие и военное дело древней Армении. Ер., 1966, табл. III, рис. 6.

[5] *Օ. Խնկիկյան,* Դամբարանների պեղումները Թումանյանի շրջանի Ծաղկաշար գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Ե., 1992, աղ. LXXVII, նկ. 1,2:

[6] *Օ. Խնկիկյան,* Դամբարանների պեղումները Հարժիս գյուղում, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, Ե., 1992, աղ. XCVII, նկ. 1:

[7] ՀՊՊԹ, ինվ. N 1908/69:

[8] ՀՊՊԹ, ինվ. N 1920/34:

[9] ՀՊՊԹ, ինվ. N 2565/334:

ձիասարքի վահանակների, երախճանների, ճակատակալների հետ միասին: Ուսումնասիրվող զանգի օրինակները հայտնի են Կարմիր բլուրից[10], Երևանի բիայնական դամբարանից[11], Վանաձորից[12], Շիրակավանից[13]: Հետաքրքիր է արծաթեղրվագ զարդը, որը հավանաբար ամրացվել է եզրին արված միջանցիկ անցքերի օգնությամբ: Նմանատիպ, բայց չափերով փոքր զարդ հայտնի է Կարճաղբյուրից:

Դամբարանի օձագլուխ ապարանջանները բրոնզե բարակ լարից են, զարդարված կարճ գծիկներով: Օձերի գլուխները ներկայացված են սխեմատիկ պատկերմամբ: Այս ապարանջաններին ավելի մոտ են Աստղաձորից և Կարճաղբյուրից հայտնաբերված օրինակները (ՀՊՊԹ, ինվ. 1904/2,8, 2565/21, 28, 263, 329): Հետաքրքիր են որպես կախիկ օգտագործված խխունջի պատյանը և սարդիոնից, մածուկից և բրոնզից ուլունքները:

Խեցեղենի մեջ առանձնանում են սափորների, կճուճների, թաս-քրեղանների խմբերը, հիմնականում մոխրագույն և դարչնագույն՝ պատրաստված դուրով կամ ձեռածեփ: Միականք սափորների վզի, շուրթի և կանթերի (հիմնականում՝ մոխրագույն և դարչնագույն մակերեսներով) բեկորները բնորոշ են մ.թ.ա. 8–6-րդ դարերում տարածված նեղ վզով, լայն բացված բերանով օրինակներին, որոնց կանթերը շուրթից միանում են իրանի վերին մասին: Այդ կանթերը աղեղնաձև են կամ կենտրոնում ելուստաձև (աղ. 2, նկ. 2, 3): Կան ոլորված (ստանում են կավե ժապավենները միասին ոլորելով) և ելուստներով կամ վերադիր «կոճակներով» օժտված կանթեր:

[10] Երեբունի թանգարան, ինվ.82/24:

[11] *Ս. Եսայան, Լ. Բիյագով, Ս. Հմայակյան, Ա. Կանեցյան,* Երևանի բիայնական դամբարանը, Ե., 1995, աղ. /15VII, ՀՀՀ 16, պր. III:

[12] *А. Мартиросян*, Армения в эпоху бронзы и раннего железа. Ер., 1964, табл. XXI/21.

[13] *Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան,* Հին Շիրակավան, Ե., 2002, աղ. LXXXI/14:

Առանձին խումբ են կազմում կճուճները, որոնք գորշ, դարչնավուն, դեղին մակերևույթով նրբախեցի կամ հաստախեցի ձեռածեփ անոթներ են (աղ. 2, նկ. 4, 5, 10): Սափորները և կճուճները հարդարված են փորագիր, փայլանախշով կամ սեղմմամբ արված ալիքագծերով, հատիկանախշով, մատնեքազարդով, թեք գծերով, փայլագիծ ցանցանախշով կամ պայտաձև ու «կոճկաձև» հավելադրումներով:

Հաջորդ խումբ խեցեղենը մեծ թիվ կազմող թաս-քրեղաններն են՝ դարչնագույն, մոխրագույն, սև մակերևույթով, հիմնականում ուղիղ կամ ներս թեքված շուրթերով (աղ. 2, նկ. 9, 11, 12, 13): Սրանց բնորոշ են շուրթերին կամ իրաններին՝ ուղղաձիգ կամ հորիզոնական տեղադրված օղակաձև, կիսաշրջանաձև, ելուստաձև կանթերը: Թաս-քրեղանների եռոտանի օրինակներից մեկը հարդարված է փորադիր ալիքաձև գծերի և կենաց ծառի պատկերներով:

Դամբարանի խեցեղենի մեջ ուշագրավ են անոթների ծորակները, որոնց մի մասը ավարտվում է կենդանու ոճավորված գլխով (աղ. 2, նկ. 7, 8): Գտնվել է նաև ծորակով օժտված կանթ:

Թիվ 61 դամբարանը իրերի տեսականիով և դրանց հարդարանքով նման է Հարժիսի, իսկ եռոտանի թաս-քրեղանների և միականթ սափորների ձևերով Աղիտուի մ.թ.ա. VIII–VI դդ. թվագրվող նյութերին: Նախնական դիտարկումներով թիվ 61 դամբարանը կարելի է թվագրել մ.թ.ա. VII–VI դարերով:

Պեղված երկրորդ դամբարանը՝ թիվ 175/1, գտնվում է հյուսիսարևելյան դամբարանադաշտում՝ Ստեփանակերտից Շուշի մտնող ճանապարհի աջակողմյան երեք բլուրներից երկրորդի լանջին: Քարահողային լիցքը օղակված է իրարից հավասար հեռավորության վրա դրված, կրոմլեխի միջին մեծության քարերով: Քարահողային լիցքից հայտնաբերվել են օքսիդիանի շեղբ (աղ. 1, նկ. 2), խեցանոթի մի քանի բեկոր: Դամբարանի ծածկասալերը բացակայում էին: Խուցը պատված էր մանր քարերի լիցքով: Դամբարանախուցը (1,8 × 0,9 × 1,1 մ)

ուղղանկյուն հատակագծով սալարկղ է, որի հյուսիսային կեսի տարբեր մակարդակներից հայտնաբերվեցին դարչնագույն միականթ սափորի (աղ. 2, նկ. 1) և կճուճի բեկորներ: Հարավային պատի մոտ՝ հատակին, դրված էին սև անոթի վատ պահպանված բեկորներ, գավազանի գլխադիր (աղ. 1, նկ. 4), ապարանջան (աղ. 1, նկ. 1), սարդիոնե ուլունք: Սակավաթիվ նյութերից ուշագրավ է գավազանի գլխադիրը: Այն սնամեջ է, գլանաձև իրանով, կիսաշրջանաձև գլխով: Հարդարված է երկայնակի անցնող միջանցիկ անցքերի և ելուստաձև շեղանկյունների շարքով: Այս իրերը լայն տարածում են ստանում մ.թ.ա. I հազ. սկզբում: Իշխանության խորհրդանիշ այս իրերի զուգահեռները կան Լծենում, Բալլուկայայում[14], Խանաբադում[15] և այլ վայրերում: Հայտնաբերված բրոնզե բարակ լարից ապարանջանը պատկանում է ամենատարածված և երկար գոյատևող տեսակին, իսկ խեցանոթներից ամբողջական է միայն միականթ սափորը, որն էլ իր զուգահեռներն ունի մ.թ.ա. X–VIII դդ. Սիսիանի առաջին և Տեղի դամբարանադաշտերի նյութերում[16]:

---

[14] *С. Есаян*. Символы власти родо-племенной знати Армении эпохи поздней бронзы и железа. Вестник Ереванского университета, 1989, табл. 1/2, 3, 4/4, 15, 23.

[15] *В. Сафарян*. Археологические находки в селе Ханабад. ИЖФ, 1992. № 1, с. 230.

[16] *O. Xnkikyan*, Syunik during the bronze and iron ages, Mayreni publishing, 2002, XLIX/1, XVIII/10.

Աղյուսակ 1



Աղյուսակ 2.